Հրապարակային
Հաստատված է՝ Վարչության 2023թ սեպտեմբերի 07-ի թիվ 01/066-407 Լ որոշմամբ

RU-1910.0.01

ԱՐԴՇԻՆԲԱՆԿԻ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ
ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

1. ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Բանկն իր բնականոն գործունեությունն իրականացնելու ժամանակ առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

1.1.1. անձնակազմի կառավարման բոլոր գործընթացներում անաչառ և արդարացի վերաբերմունքի ցուցաբերում,

1.1.2. ազգային, ռասայական, սեռական, կրոնական, սոցիալական ծագման, դասային պատկանելիության, ազգային կամ էթնիկական, տարիքային կամ սահմանափակ աշխատունակության, քաղաքական կամ այլ համոզմունքների, կուսակցական պատկանելիության հիմքով որևէ խտրականության դրսևորման բացառում, ինչպես անձնակազմի հետ, այնպես էլ՝ սպասարկող անձնակազմ-հաճախորդ հարաբերություններում,

1.1.3. աշխատողների բոլոր իրավունքների պահպանում և յուրաքանչյուրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորում,

1.1.4. քաղաքավարի և ուշադիր վերաբերմունքի դրսևորում հաճախորդների և գործընկերների նկատմամբ,

1.1.5. Առաջնային սկզբունքներից է Անձնակազմի կառավարման գործընթացում «Ուղղվածությունը դեպի հաճախորդ» դիրքորոշման սկզբունք,

1.1.6. Բանկը կարևորվում է յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ բարեհամբույր և ուշադիր վերաբերմունքը և որակյալ ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ դա անհրաժեշտ է Բանկի առաքելության և հիմնական նպատակների իրականացման համար:

1.2. Բանկի ընդհանուր նպատակն գործարար էթիկայի կանոնների պահպանման շնորհիվ բարձր պահել Բանկի գործարար բարձր համբավը, ուստի անձնակազմի յուրաքանչյուր անդամ իր ամենօրյա աշխատանքում ցուցաբերում է խելամտություն և ջանք է գործադրում գործընկերների և հաճախորդների հետ հարաբերություններում համբավի (ռեպուտացիոն) ռիսկի նվազեցման համար:

2. ԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Աշխատողները պարտավոր են.

2.1.1. զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել Բանկի աշխատանքները (բնականոն աշխատանքային ընթացքը),

2.1.2. ղեկավարվել արդարության, բարեխղճության և ազնվության սկզբունքներով,

2.1.3. ղեկավարվել հաճախորդի շահերի գերակայության սկզբունքով,

2.1.4. հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգային կամ էթնիկ, ռասայական, սեռական, կրոնական դավանանքից, հավատամքից, սոցիալական ծագման, դասային պատկանելի-ությունից, տարիքից, քաղաքական կողմնորոշումներից կամ այլ համոզմունքներից,

2.1.5. լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ և օրինակելի,

2.1.6. իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի և հավատի ձևավորմանը և պահպանմանը, որ Բանկի գործունեությունը հիմնված է անկողմնակալության, ազնվության և արդարության գաղափարների վրա,

2.1.7. խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից

2.1.8. ծանոթանալ սույն Կանոններին և առաջնորդվել դրանցով իր ամենօրյա աշխատանքում, խուսափել Կանոնների շրջանակներից դուրս, Արդշինբանկի աշխատողին ոչ հարիր վարքագծից:

3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ, ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

3.1. Անձնակազմի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ չպետք է թույլ տա, որ իր անձնական շահերը, նախապատվություններն ու այլ անձինք ազդեն իր մասնագիտական դատողությունների և որոշումների օբյեկտիվության վրա, որ պետք է զերծ մնալ իրավիճակներից, երբ անձնական շահերը հակադրվում են Բանկի և հաճախորդների շահերին, որոնց ժամանակ կարող է առաջանալ շահերի բախում:

3.2. Բանկն ընդունել է շահերի բախման քաղաքականություն, և յուրաքանչյուր աշխատակից պետք է առաջնորդվի քաղաքականության դրույթներով և շահերի բախման իրավիճակներում գործի՝ համաձայն «Շահերի բախման կանխարգելման և կառավարման կարգի»:

3.3. Բանկն իր գործունեության մեջ հավատարիմ է կոռուպցիոն ցանկացած դրսևորումներից զերծ մնալու սկզբունքին («կոռուպցիայի զրոյական հանդուրժողականության» սկզբունք) և ունի իր դերակատարումը հասարակությունում հակակոռուպցիոն մշակույթի զարգացման գործում:

3.4. Բանկի անձնակազմի անդամին արգելվում է ցանկացած իրավիճակում, այդ թվում՝ ուղղակի կամ անուղղակի ձևով, անձամբ կամ երրորդ անձանց միջոցով առաջարկել, տալ, խոստանալ, խնդրել կամ ստանալ կաշառք կամ կատարել չնախատեսված (չսահմանված,

սակագներից դուրս) այլ վճարումներ՝ Բանկի բնականոն որևէ գործընթաց, գործարք կամ այլ հարցեր շրջանցելու կամ կրճատելու նպատակով:

3.5. Բանկը ակնկալում է հաճախորդներից, գործընկերներից և արտաքին այլ կառույցներից կոռուպցիոն հակազդեցությանն ուղղված համապատասխան կանոնների պահպանում:

3.6. Բանկում գործում է հակակոռուպցիոն քաղաքականություն, և յուրաքանչյուր աշխատակից պետք է առաջնորդվի քաղաքականության դրույթներով և կոռուպցիոն դրսևորումների և ազդակների դեպքում առաջնորդվի «Հակակոռուպցիոն քաղաքականությամբ»:

3.7. Բանկն անվերապահորեն կատարում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը կարգավորող օրենսդրական ակտերի պահանջները:

3.8. Բանկը ձեռնարկում է միջոցներ, որպեսզի գործընկերային հարաբերություններ հաստատի միայն հուսալի գործընկերների հետ, որոնք զբաղվում են օրինական գործունեությամբ: